https://doi.org/10.46991/S&L/2022.92.082

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գայանե Մելիքյան
ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական համագործակցություն վարչություն դատախազ,
ԵՊՀ քրեական դատավարության ամբիոնի սպիրանտ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ գլուխը, որն ունի «Քրեական գործերով իրավական օգնությունը միջազգային պայմանագրերին համապատասխան» վերտառությունը, 478.2-րդ հոդվածով սահմանում է հետևյալ կարգավորումը՝ «1. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված անձանց նկատմամբ կիրառվում է ժամանակավոր կալանավորում մինչև 40 օր ժամկետով կամ միջազգային պայմանագրով նախատեսված այլ ժամկետով՝ հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով (...):

2. Մինչև անձին հանձնելու վերաբերյալ միջնորդություն ստանալը օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կամ դատավճիռը կարող է հանձնվել փոստով, այդ թվում՝ էլեկտրոնային կամ հեռագրով կամ տեխնիկական այլ միջոցներով, ինչպես նաև Միջազգային քրեական ոստիկանության (Ինտերպոլի) կամ անձի հետախուզում իրականացնող այլ միջազգային կազմակերպության միջոցով, որի մասնակից է Հայաստանի Հանրապետությունը:

3. Դատախազն անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնում է ձերբակալման վայրի դատարան: Միջնորդությանը կցվում են ձերբակալման արձանագրության պատճենը, օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ որոշումը կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերից մեկը և ձերբակալվածի անձը հաստատող փաստաթղթերը:

4. Միջնորդությունը քննարկելիս դատարանը, լսելով **դատախազին,** ձերբակալված անձին և նրա պաշտպանին, ուսումնասիրելով ներկայացված նյութերը (...)»:

Մեջբերված հոդվածի 2-րդ մասով սահմանված են այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ներպետական դատարաններին ներկայացնելու և դրանց հիման վրա անհրաժեշտության դեպքում անձին կալանավորելու համար: Այդպիսի փաստաթղթերից մեկը օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունն է:

Կախված անձի նկատմամբ հայտարարված հետախուզման տեսակից՝ ներպետական կամ միջազգային, ինչպես նաև կոնկրետ պետության հետ տեղեկատվության փոխանցման արագությունից՝ վերոնշյալ միջնորդությունը կարող է արտահայտվել ինչպես Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (այսուհետ՝ Ինտերպոլ) կողմից թողարկվող Red notice (կարմիր անկյունով քարտ)

կամ Diffusion քարտերի տեսքով կամ էլ պետության կողմից ՀՀ իրավասու մարմիններին ուղղված միջնորդություն/խնդրանքով՝ ուղեկցվող անհրաժեշտ փաստաթղթերով (շատ հաճախ ձեռք բերված են լինում երկու փաստաթղթերն էլ):

Ինտերպոլի ծանուցումները (Interpol notice) համագործակցության վերաբերյալ միջազգային հարցումներ/ահազանգեր են, որոնք թույլ են տալիս մասնակից պետությունների ոստիկանություններին փոխանակել հանցագործությունների հետ կապված կարևոր տեղեկատվությամբ[1]:

Գոյություն ունեն ծանուցումների 8 տեսակներ, որոնցից յոթը ունեն գունային կոդավորում՝ պայմանավորված իրենց գործառական առանձնահատկություններով՝ կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, սև, նարնջագույն, մանուշակագույն: Ամենատարածված և հանդիպող տեսակներից է կարմիր անկյունով քարտը, որը համարժեք է կալանավորման վերաբերյալ սանկցիային: Ութերորդը հատուկ ծանուցումն է, որը թողարկվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պահանջով:

Diffusion-ը նույնն է, ինչ վերոնշյալ ծանուցումներ/քարտերը և ծառայում է նույն նպատակների համար, սակայն ուղարկվում է ուղղակիորեն մասնակից պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից իրենց ընտրած պետությունը: Difussion-ը ևս հաշվառվում է Ինտերպոլի տեղեկատվական շտեմարանում[2]:

Ե՛վ կարմիր անկյունով քարտը, և՛ Difussion-ը բաղկացած են բաժիններից, որոնք պարունակում են հետախուզվող անձի, հետախուզման, քարտի հրապարակման նպատակի և այլնի վերաբերյալ տվյալներ:

Վերոնշյալ քարտերի/փաստաթղթերի (Diffusion-ը կետերով առանձնացված չէ, օրինակը բերված է կարմիր անկյունով քարտի կառուցվածքով) «ձեռնարկվող միջոցներ» բովանդակությամբ 3-րդ կետում առկա է հետևյալ միջնորդությունը (խնդրանքը)՝ «պարզել գտնվելու վայրը եվ կալանավորել հանձնման նպատակով» և երաշխավորվում է, որ անձի կալանավորման դեպքում կպահանջվի հանձնումը՝ համաձայն ներպետական օրենքների և/կամ գործող երկկողմ և բազմակողմ պայմանագրերի, իսկ նույն կետի «ժամանակավոր կալանք» վերնագրի ներքո առկա է հետևյալ գրառումը. «Սույն միջնորդությունը (խնդրանքը) նախնական [ժամանակավոր] կալանքի պաշտոնական խնդրանք է՝ ազգային օրենսդրության և/կամ երկկողմ և բազմակողմ պայմանագրերի համաձայն»:

Փաստաթղթի նույն կետում նշվում է, թե ինչու է հետախուզվում անձը: Կախված այն հանգամանքից, թե որ փուլում է անձի վերաբերյալ քրեական գործը՝ անձը կարող է հետախուզվել քրեական հետապնդման իրականացման կամ պատիժն ի կատար ածելու նպատակով:

Վերոնշյալ հանգամանքն էլ նկատի ունենալով՝ որոշվում է, թե իրավական օգնություն ցուցաբերող կենտրոնական մարմիններից (տվյալ դեպքում ՀՀ գլխավոր դատախազություն կամ ՀՀ արդարադատության նախարարություն) կոնկրետ որը պետք է իրականացնի հետագա անհրաժեշտ գործողությունները:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված է հանցագործություն կատարած անձի հանձնումը այդ պայմանագրի մասնակից համարվող օտարերկրյա պետությանը, և եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձի նկատմամբ՝

1) հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումներն ընդունում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, եթե գործը գտնվում է մինչդատական վարույթում.

[1] Տե՛ս https://www.interpol.int/How-we-work/Notices
[2] Տե՛ս file:///C:/Users/Gayane/Downloads/GI-02%20-%20NOTICES%20Factsheets_EN.pdf

2) հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, եթե գործը գտնվում է դատական վարույթի ընթացքում, ինչպես նաև այն դեպքում, երբ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ»:

Մեջբերված հոդվածի վերլուծությունից ակնհայտ է, որ այն դեպքերում, երբ անձի վերաբերյալ գործը գտնվում է մինչդատական փուլում, հետախուզվող անձի ձերբակալման, կալանավորման, օտարերկրյա պետության հանձնման վերաբերյալ միջնորդության քննարկման և դրա արդյունքում համապատասխան որոշման կայացման համար իրավասու մարմին է ՀՀ գլխավոր դատախազությունը, իսկ գործի դատաքննության կամ դատավճռի առկայության դեպքում՝ ՀՀ արդարադատության նախարարությունը:

Սակայն, չնայած ՀՀ ՔԴՕ 479-րդ հոդվածով սահմանված հստակ կարգավորմանը, այնուամենայնիվ առկա են որոշակի անհստակություններ:

Այսպես, վերը մեջբերված 478.2-րդ հոդվածի 3-րդ մասը որպես անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու միջնորդություն ներկայացնելու սուբյեկտ է դիտում դատախազին՝ չտարբերակելով, թե հետախուզվող անձը ինչ նպատակով է հետախուզվում, և վերջինիս կալանավորման դեպքում որ մարմինն է իրականացնելու օրենքով սահմանված հետագա գործողությունները:

Այսինքն, առաջանում է մի իրավիճակ, որ թեև հետախուզվող անձի հետագա կալանավորման անհրաժեշտության, հետախուզում հայտարարած պետության իրավասու մարմնի հետ իրականացվող գրագրության, հանձնման միջնորդության ստացման, այն քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինը ի սկզբանե զրկված է հետախուզվող անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու հնարավորությունից:

Նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքը՝ գործնականում, երբ օտարերկրյա պետության կողմից որպես խափանման միջոց կալանքով հետախուզվող անձը հայտնաբերվում է ՀՀ տարածքում, դրա մասին անհապաղ տեղյակ է պահվում ՀՀ գլխավոր դատախազությունը, որը, անձի վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզելով, որ անձը հետախուզման մեջ է գտնվում դատաքննության փուլում գտնվող գործով, դրա մասին անհապաղ տեղյակ է պահում ՀՀ արդարադատության նախարարությանը՝ առաջարկելով դիրքորոշում ներկայացնել անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու նպատակահարմարության վերաբերյալ: ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած դիրքորոշումն ու դրա հիմնավորումներն էլ հիմք են, որ դատախազությունը համապատասխան միջնորդություն ներկայացնի դատարան: Որից հետո արդեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.3 հոդվածի 1-ին մասի հիման վրա համապատասխան միջնորդության առկայության դեպքում ՀՀ արդարադատության նախարարությունը լուծում է անձի նկատմամբ հանձնման նպատակով կալանավորման անհրաժեշտության հարցը:

Սակայն, եթե այսքանով կարծես թե լուծվում է օտարերկրյա պետության կողմից հետախուզվող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ժամանակավոր և հանձնման նպատակով կալանավորման հարցը, խնդիրն այլ է օտարերկրյա պետության կողմից հետախուզվող ՀՀ քաղաքացիների դեպքում:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.3 հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի և սույն օրենսգրքի 478.2 հոդվածի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա՝ քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու նպատակով:

Այսպես, թե՛ ՀՀ սահմանադրությամբ, թե՛ միջազգային պայմանագրերով և թե՛

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է սեփական քաղաքացիներին օտարերկրյա պետությանը հանձնելու արգելքը[1]:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ՀՀ քրեական դատավարության 478.3-րդ 8-րդ մասով կարգավորվում են այն իրավիճակները, երբ օտարերկրյա պետության կողմից հետախուզվողը ՀՀ քաղաքացի է՝ հնարավորություն տալով միջազգային պայմանագրերին համապատասխան վերջինիս նկատմամբ իրականացնել քրեական հետապնդում քրեական գործի փոխանցման դեպքում:

Միևնույն ժամանակ, վերոնշյալ կարգավորումը իր հերթին ունի որոշակի թերություններ: Այսպես, սահմանելով սեփական քաղաքացիների ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման համար հետախուզվելու դեպքում քրեական վարույթի փոխանցման համար կալանավորելու հնարավորություն՝ հոդվածով հաշվի չեն առնվում այն իրավիճակները, երբ սահմանված 8-ամսյա ժամկետում օտարերկրյա պետությունը ոչ միայն չի ուղարկում քրեական գործը, այլև շատ հաճախ այն ուղարկելու մտադրության վերաբերյալ չի արտահայտում որևէ դիրքորոշում, ինչի պատճառով ՀՀ քաղաքացին 8 ամիս զրկվում է ազատությունից, իսկ հետո ազատ արձակվում առավելագույն ժամկետը լրանալու հիմքով:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազությունը նմանատիպ իրավիճակներում վարվում է հետևյալ կերպ:

Այն դեպքերում, երբ հետախուզող պետության և ՀՀ միջև առկա է քրեական գործերով վարույթի փոխանցում նախատեսող միջազգային պայմանագիր, հետախուզվող անձանց ձերբակալելիս ձերբակալումն իրականացրած մարմինը անհապաղ ստուգում է անձի՝ ՀՀ քաղաքացի հանդիսանալու փաստը և ձերբակալման վերաբերյալ փաստաթղթերի հետ ՀՀ դատախազություն է ներկայացնում նաև անձի՝ ՀՀ քաղաքացի հանդիսանալու կամ չհանդիսանալու վերաբերյալ նախնական տեղեկություն:

Ձերբակալված անձի հայտնաբերման և ՀՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ տեղեկությունը ՀՀ գլխավոր դատախազությունը անմիջականորեն կամ ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի ու ԱԳՆ-ի միջոցով (կախված հետախուզող պետության հետ համագործակցության ձևից) հայտնում է հետախուզող պետության իրավասու մարմնին և առաջարկում ձերբակալման ժամկետի ավարտից առնվազն 14 ժամ առաջ ներկայացնել **քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու վերաբերյալ դիրքորոշում**՝ վարույթը փոխանցելու նպատակով անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն, այդպիսի միջնորդություն ստացվելու դեպքում՝ **քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու նպատակով** անձին կալանավորելու մասին միջնորդություն է ներկայացվում դատարան, իսկ չստացվելու դեպքում անձը ազատ է արձակվում արգելանքից:

---

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ մասը. «Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,
«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի համաձայն՝1. պայմանավորվող կողմը պետք է իրավունք ունենա մերժելու իր քաղաքացիների հանձնումը,
«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիայի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնումը չի կատարվում, եթե՝
ա) անձը, որի հանձնումը պահանջվում է, հարցվող Պայմանավորվող կողմի քաղաքացի է,
ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 488-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժվում է, եթե՝ խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնմանը»:

Նմանատիպ իրավիճակ առաջ է գալիս նաև այն դեպքերում, երբ ՀՀ քաղաքացիները օտարերկրյա իրավասու մարմինների կողմից հետախուզվում են դատաքննության կամ դատավճիռը ի կատար ածելու փուլում գտնվող գործերով:

Քանի որ Ինտերպոլի կարմիր անկյունով քարտի և Diffusion-ի կառուցվածքի համապատասխան բաժնում նշվում է միայն հետախուզման նպատակը, այն է՝ անձի հայտնաբերումը, և հանձնում հայցող մարմնին, ինչպես նաև նշվում է, որ քարտը հավասարազոր է համապատասխան պետության իրավասու դատարանի տված կալանքի որոշմանը, ստացվում է, որ սեփական քաղաքացիների հանձնման բացառման պարագայում քրեական վարույթի փոխանցման համար կալանավորումը վերոնշյալ քարտերի կամ համապատասխան պետության իրավասու դատարանի որոշման հիման վրա իրավաչափ չէ, քանի որ այդ որոշումների նպատակը և սեփական քաղաքացիների կալանավորման նպատակները տարբեր են և չեն կարող դրվել սեփական քաղաքացիների կալանավորման միջնորդությունների հիմքում:

Քանի որ իրավասու պետությունը հանցանք կատարած անձի նկատմամբ հետախուզում հայտարարելիս, դա անում է վերջինիս որևէ պետությունում հայտնաբերելու և իրեն հանձնելու նպատակով՝ առանց հաշվի առնելու հանցանք կատարած անձի քաղաքացիությունը և այն հանգամանքը, թե որ պետությունում վերջինս կարող է հայտնաբերվել:

Հետևաբար, Ինտերպոլի համապատասխան քարտեր/ծանուցագրերի հիման վրա սեփական քաղաքացիներին կալանավորելը իրավաչափ չէ, քանի որ վերոնշյալ հանագամանքը հետագա հանձնման միջնորդությունը մերժելու հիմք է, իսկ այն նպատակը, որը դրված է Իտերպոլի կողմից թողարկված քարտի հիմքում, տվյալ դեպքում բացակայում է:

Նկատի ունենալով, որ ժամանակավոր կալանավորման միջնորդություն դատարան ներկայացնելու իրավունք ունի դատախազը՝ գործնականում նմանատիպ իրավիճակներում ՀՀ արդարադատության նախարարությանը տեղեկացվում է դատաքննության փուլով հետախուզվող ՀՀ քաղաքացու հայտնաբերման վերաբերյալ և առաջարկվում համապատասխան պետության իրավասու մարմնից ստանալ **վարույթը փոխանցելու նպատակով անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն**, որը հիմք կհանդիսանա դատախազի կողմից համապատասխան միջնորդություն դատարան ներկայացնելու համար:

Այսպիսով, վերը քննարկված խնդիրները նկատի ունենալով՝ առաջարկվում է օրենսգրքի 478.2 հոդվածում կատարել փոփոխություն՝ որպես ժամանակավոր կալանավորման միջնորդություն ներկայացնող և դրանից բխող դատավարական գործառույթներ իրականացնող իրավասու մարմին նախատեսել նաև ՀՀ արդարադատության նախարարությունը՝ նկատի ունենալով նաև այն, որ անձի նկատմամբ հանձնման համար կալանավորում կիրառելու միջնորդություն ներկայացնելու իրավասու սուբյեկտ է նաև ՀՀ արդարադատության նախարարությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.3-րդ հոդվածի 8-րդ մասում սեփական քաղաքացիների կալանավորման հնարավորություն նախատեսելով հանդերձ՝ որպես պարտադիր պայման սահմանել վարույթը ստանալու նպատակով անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն, իսկ այդպիսի միջնորդություն չստացվելու դեպքում՝ ձերբակալման առավելագույն ժամկետը լրանալուց հետո ազատ արձակել արգելանքից:

ОСОБЕННОСТИ ЗАДЕРЖАНИЯ ЛИЦ, РАЗЫСКИВАЕМЫХ ПО УГОЛОВНОМУ ДЕЛУ, НАХОДЯЩЕМУСЯ НА ЭТАПЕ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА, В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

Гаяне Меликян
Прокурор управления международно-правового сотрудничества Генеральной прокуратуры РА, аспирант кафедры уголовно-процессуального права и криминалистики юридического факультета ЕГУ

Статья посвящена особенностям задержания лиц, разыскиваемых иностранным государством, по Уголовно-процессуальному кодексу Республики Армения. В статье рассматриваются субъекты, обладающие правом подавать в суд ходатайство о задержании, необходимые для ходатайства документы и пр. В статье рассматриваются также вопросы, возникающие на практике в связи с субъектным составом представления соответствующего ходатайства, и представлены предложения о соответствующих поправках для включения их в Уголовно-процессуальный кодекс РА.

PECULIARITIES OF DETENTION OF PERSONS WANTED ON A CRIMINAL CASE BEING AT THE STAGE OF TRIAL ACCORDING TO CRIMINAL PROCEDURE CODE OF RA

Gayane Melikyan
Prosecutor of the Department of International-Legal Cooperation Prosecutor General's Office of the Republic of Armenia, postgraduate student (aspirant) of criminal procedure and criminalistics chair of the faculty of Law of YSU

The article is devoted to the peculiarities of the detention of persons wanted by a foreign state under the Criminal Procedure Code of the Republic of Armenia. The article examines the subjects having the right to file a petition for detention, the documents required for the petition, etc. The article also examines the issues arising in practice in connection with the subject composition of the submission of the relevant petition, and the proposals are suggested for the corresponding amendments to be included in the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

Բանալի բառեր – *ժամանակավոր կալանավորում, հանձնման նպատակով կալանավորում, դատախազ, ՀՀ արդարադատության նախարարություն*
Ключевые слова: *временное задержание, задержание с целью выдачи, прокурор, Министерство юстиции РА*
Keywords: *temporary detention, detention with the purpose of extradition, the Prosecutor, the RA Ministry of Justice*